

ՀՐԱՀԱՆՔ

ԽՐԱՏԵՏԵՍԱԿԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ, ԱՅԱՍՏՎԱՎԱՐԱ
ԱՊՐԱՆՔԱՅԻ ՖԵՐԴԱՎԻՍԻ ԵՎ ԿՈՎԵԼԻՎ
ՏԵՏԵՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԿԱՇՎԵԶՈՒՄՔ
ՔԵՐԹԵԼՈՒ, ԱԼԵԼՈՒ ԳՈՀԵԼՈՒ,
ՀԱԽՉԵԼՈՒ, ՅԵՎ ՊՈՒՐԵԼՈՒ.

675 1338.1/600

29 JAN 2010 9/1

«ԱՅՉՈՒՋՉԱԳՈՏԿՈՒԺ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺՄԱՆՄՈՒՆՔ

ՀՐԱԶԱՆԳ

ԽՈՐՃՏԵՍԵՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ,
ԱՆԱՍՆԱՊՐԱՎԱԿԱՆ-ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ
ՅԵՎ ԿՈԼՏՏԵՏԵՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՇՎԵԼՈՒՄՔԸ
ՔԵՐԵՑԵԼՈՒ, ԱՇԵԼՈՒ, ՊԱԶԵԼՈՒ, ՀԱՆՁՆԵԼՈՒ ՅԵՎ
ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.



ԳՅՈՒՂԱՑՆԵՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1935

1/2

Հոստանում եմ
 ԽՍՀՄ-ի հողժողկամի
 տեղակալ՝ ՑԻԼԿՈ
 ԽՍՀՄ խորհրդականության
 ներք ժաղկոմի տեղակալ
 ԳԵՐՉԻԿՈՎ
 20/12—1933 թ. № 18302

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՇՎԵԶՈՒՄԲԸ ՔԵՐԹԵԼՈՒ, ԱՂԵԼՈՒ, ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ
 ՀԱՆՉԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.
 ԱՆԱՍՆԱՎԱՆ. ԱԿԱՆ. ԱՓՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՅԵՎ
 ԿՈԼՏՆՏԵՍԵՄԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԲ

1. ՄՈՐԹԻՆ ՔԵՐԹԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Նախքան մորթելն անհրաժեշտ ե մաքրել
 անասունի մորթին: Մորթին պետք ե մաքրել
 փափուկ խոզանակով կամ ծղոտով, վորպեսզի
 անասունի կաշին չճանկուավի: Յեթե անասունը
 շատ կեղտու ե, ապա նրան նախապես պետք
 ե լողացնել այնպես, վոր մորթելու ժամանակ
 նա արգեն չորացած լինի: Զաեռն անասուններին
 պետք ե լողացնել տաք շենքում, իսկ յեթե այդ
 պիսի շենք չկա, ապա չպետք է լողացնել, այլ
 միայն մաքրել կաշին: Վոչխալներին մորթելուց
 առաջ չպետք ե լողացնել:

Պատուի խմբագիր՝ Ա. Խաչատրյան
Տեխ. խմբագիր՝ Պ. Սարյան

ԹԵՐԱԳՐ. Հ Պար. Հակոբյան



1-3428 գր.

Պատուի խմբագիր՝ Ա. Խաչատրյան
Տեխ. խմբագիր՝ Պ. Սարյան

ԹԵՐԱԳՐԻ

Հ Պար. Հակոբյան

պատվիր Հ 751

տիրամ 2000

Հանձնված ե արտադրության 1934 թ. դեկտեմբերի 29-ին
Ստորագրված ե տպագրելու 1935 թ. հունվարի 13-ին

Պյուղեատի տպարան, Յերևան, Նալբանդյան Հ 50

Անասունների մորթին մաքրելիս պետք ե
լավ մաքրել նրանց կողքերը, բղերը և փորը: Սա
վերաբերում ե հատկապես խոշոր յեղջուրավոր
անասուններին:

2. Կեղտոտությունը քցում ե մորթու վո-
րակը և արժեքը, վորի համար պետք ե թե-
քերթելու և թե հետագայում աղելու, պահելու
ու տեղափոխելու ժամանակ մորթին չկեղտո-
տել:

3. Անասունները պետք ե մորթվեն մաքուր
շենքերում (սպանդանոցում կամ սպանդանոցա-
յին հրապարակում), մաքուր հատակի կամ փրո-
վածքի վրա: Սատկած անասունների մորթին
պետք ե քերթել ուտիլ-գործարաններում կամ
ուտիլ-ուտանովկաներում, իսկ վարտեղ այդպի-
սիք չկամ՝ անասունների գերեզմանոցում:

4. Մորթելիս անասունի կոկրդը (վե-
զը) պետք ե կտրել յերկարությամբ և վոչ թե
լայնությամբ: Կտրվածքի տակ պետք ե մի տաշտ-
գնել, վոր ամբողջ արյունը նրա մեջ հավաքվի և
անասունի մարմնի տակը չգնա:

5. Մորթին քերթելիս պետք ե պահպանել
հետեւյալ կանոնները.

ա) Մորթին պետք ե քերթել վոչ միայն
մարմնի վրայից, այլ անպայման նաև գլխից ու
փոտներից՝ մինչև սմբակները: Պոչը պետք ե քեր-
թել մինչև նրա ծայրի փունջը:

բ) Փորի և կրծքի վրա մորթին պետք ե կտրել
ուղիղ մեջտեղով, իսկ խողերինը վոչ թե ուղիղ
փորի մեջտեղով, այլ աջ կամ ձախ ծծերի գծով

գ) Վոտքերի վրա կտրվածքն արվում ե ներ-
սի կողմից և տարվում է յետեի վատերը՝ վազքի
հողի վրայով դեպի փորի կտրվածքը (և վոչ թե
դեպի հետանցքը), իսկ առջևի վոտքերինը՝ դեպի
կրծոսկրի գագաթը:

դ) Մորթիները պետք ե քերթել առանց
ծակելու և կտրտելու:

յե) Քերթելիս ականջները չպետք ե կտրել
ու դեն ձգել, այլ պետք ե թողնել մորթու վրա:

զ) Պոչի ծայրի փունջը նույնպես պետք ե
թողնել մորթու վրա:

ե) Յեղջուրները (կոտոշները) և գանգի
վոսկրը չպետք ե թողնել մորթու վրա:

ը) Վոչ ուշ, քան քերթելուց 2—3 ժամ
հետո, թարմ մորթին պետք ե հանձնել մթերող
կազմակերպության մոտակա մթերման կետին:

6. Հիշյալ 2—3 ժամվա ընթացքում մորթին
պետք ե պահել՝ ամառը զով, իսկ ձմեռը՝ վոչ
ցուրտ շենքում, վարպեսզի մորթին ամառը տա-
քից չփշանա, իսկ ձմեռը ցըտից չսառչի: Յեթե
հսարավոր չե քերթած կաշին 2—3 ժամվա ըն-
թացքում հանձնել, ասպա պետք ե քերթելուց հե-
տո կաշին թողնել մի կես ժամ, վոր սառչի և
աշա աղիլ:

2. ՄՈՐԹԻՆԵՐ ԱՂԵԼՈՒ (կրնակիվելու)
ԿԱՆԱԿՆԵՐԸ

7. Ամբողջ կաշվեհումքը կլոր տարին պետք է կոնսերվվի աղելու միջոցով: Միայն առանձին դեպքում, Սայուզզագոտկոժի հատուկ կարգադրությամբ (վորն արգում ե նրա մթերման կետերի միջոցով), վոչսարի, այծի, կաթնակեր հորթի (օպօք) և քուռակի մորթիները կոնսերվվում են չորացնելու միջոցով:

ԾԱՆՈԹ.— Ուղբեկստանում, թուրքմենստանում, կիրգիզիայում, կարակալպակիայում և Հար. Կաղակստանում (այսինքն՝ շոգկլիմա ունեցող շրջաններում) գարնանը և ամռանը վոչսարի, այծի, կաթնակեր հորթի և խոտակեր հորթի (վարոստոկ) մորթիներն աղելուց հետո 1—2 որ չորացվում են:

Այս դեպքում աղելիս աղը մորթու վրա պետք է արորել ձեռքով, իսկ զրանից հետո հիշյալ մորթիները չորացնել և նրանց հետ վարվել այնպես, ինչպես հիշված և սույն հրահանդի 10 և 13-րդ կետերում:

8. Սառեցնելը գցում ե մորթու վորակն ու արժեքը, վորի պատճառով արգելվում ե սառեցնել մորթիները:

9. Կաշվեհումքն աղել ներքոհիշյալ յերկու ձևերից մեկնումեկով:

Աղելու առաջին ձեմքը

ա) Կաշվեհումքն աղի լուծույթի (սուզլութի) մեջ թաթախելով և ապա, տուղլուքից հանելուց հետո, վրան աղ ցանելով, և

բ) Միայն աղ անելով:

Խոշոր յեղջյուրավոր անասունների, ձիերի և ուղարկի մորթիներն ամենից լավ և աղել առաջն յեղանակով, այսինքն՝ տուղլուքի մեջ թաթախելով: Դրա համար պետք և տակարի կամ տաշտի մեջ պատրաստել աղի լուծույթ՝ տուղլուք:

Ամանի մեծությունը և աղի ջրի քանակությունը կախված են մորթիների քանակից ու քաշից: Կաշվի յուրաքանչյուր 10 կիլոգրամի համար պահանջվում ե. ա) մոտավորապես 70 լիտր տարրությամբ տակառ կամ տաշտ (ամանի պետք և ամուր լինի), բ) 26—30 լիտր ջուր և գ) 9—10 կիլոգրամ աղ: Ցեթե մորթիներն ավելի յեն կշռում, ապա համապատասխան չափով պետք և վերցնել ավելի մեծ աման և ավելի շատ ջուր և աղ:

Ջրի մեջ աղը պետք է լավ խառնել, վորնա ամբողջապես լուծվի և ապա պետք և վորոշել տուղլուքի թնդությունը: Դրա համար գործ

և ածվում խտաշափ (արիոմետր) կոչված գործիքը: Յեթե աղը վերցված և բավականաշափ և նա ամբողջապես լուծվել ե, ապա արիոմետրը ցույց կտա 24-աստիճան, համենայն դեպք 20 աստիճանից փոք պակաս: Հենց դա ե տուղլուքի համար պահանջվող խտությունը: Նախ քան մորթիները տուղլուքի մեջ մտցնելը, նրանց պետք ե լրացնալ: Լվանալու համար մորթին պետք ե փրուել հատակի կամ հարթ փուլածքի վրա գլխիվայր (верх мездрой) դեպի վեր, և վրան պետք ե ջուր լցնել ու փափուկ ավելով լվանալ արյունն ու կեղաք: Ապա մորթին պետք ե շուռ տալ բըրդոտ կողմով գեպի վեր և նույն ձեռվ լվանալ այդ յերեսը: Զուր լցնելով և թիակի ողնությամբ մորթին ճղմելով պետք ե վողջ կեղաք վերացնել: Լվացած մորթիները պետք ե զցել տուղլուքի մեջ այնպես, վոր ամբողջ մորթին ծածկը վի տուղլուքով: Տուղլուքի մեջ զցած մորթիների վրա դրվում ե մի տախտակ, վորը չի թողնում մորթիներին յերես բարձրանալ: Տուղլուքի մեջ մորթիները պահպում են 24-ժամ, վորից հետո հանվում են և կախվում տակառի, կամ տաշտի վրա այնպես, վոր $1\frac{1}{2}$ -ից—2 ժամվաղնթացքում աղաջուրը մորթուց հետթափվի տակառի կամ տաշտի մեջ: Տուղլուքը կարելի յե ոգտագործել 2—3 անգամ՝ ամեն անգամ ուժեղացնելով աղի

թարմ լուծույթով: Յեթե տուղլուքն ոգտագործվում ե մեծ ընդմիջումներով, որինակ, ամառը՝ 5-որվա, իսկ ձմեռը՝ 15—20 որվա, ապա նա արդին հնացած ե լինում և անհրաժեշտ ե այդպիսի դեպքերում հին տուղլուքը թափել և նորը պատրաստել: Յերբ տուղլուքը մորթիների վեյցից հոսում վերջանում է, մորթիները փոռում են մաքուր հատակի կամ տախտակամածիվրա մեղքայով գեպի վեր, մեկը մյուսի վրա, և ամեն մի մորթու վրա ցանվում ե մաքուր և չոր աղ՝ մորթու կշռի 1/5-ականի չափով (15—20⁰/): Այս վիճակում մորթիները մնում են 3-որ, վորից հետո փաթաթվում են:

Յեթե մորթիները թփով քիչ են (տասից պակաս), նրանց կարելի յե աղելուց հետո ուղղակի փաթաթել: Փաթաթել հետևյալ ձևով: Սկզբում գլխամասը, այնպես, վոր նա ընկնի առջնի յերկու վոտերի արանքը, ապա թեթև կերպով ծալել հետույքամասը պոչի հետ միասին, վորից հետո ծալել յերկու կողերն այնպես, վոր նրանց յեղքերը միմյանց առնեն մորթու մեջ տեղում: Մորթու բոլոր այս մասերը պետք ե թեթև կերպով աղել ըրդի կողմից: Դրանից հետո մորթին պետք ե մեջքի յերկարությամբ ծալել, մեկ ել ծալել գրան հակառակ ուղղությամբ՝ յերեք տակ: Փոքր մորթիները՝ չալվում են ուղղակի յերեք ւակ, առանց ենջըի

յերկալությամբ ծալելու։ Փաթաթած մորթիները
պետք ե դնել չոր և զով տեղ. ավելի լավ ե անմի-
ջապես տանել ու հանձնել մթերման կետին։

Աղելու յերկրորդ ձեվը

Յուրաքանչյուր մորթի փռվում ե մաքուր
հատակի կամ տախտակամածի վրա՝ մեզզրայով
գեղի վեր. մանրամասն ուղղելուց հետո, պետք
ե լավ աղել կորեկի հատիկի մեծությամբ մաս-
րած չոր և մաքուր աղով։ Պետք ե աղել մոր-
թու ամբողջ մակերեսը. Ծախսելիք աղի քանակը
կախված ե մորթու քաշից։ Զմեռը պետքե ե
ծախսել մորթու քաշի 1/3-ի չափից վոչ պակաս,
այսինքն՝ որինակ, յեթե մորթին կշռում ե 15
կիլոգրամ, պետք ե ծախսել 5 կիլոգրամից վոչ
պակաս աղ։ Ամրանը պետք ե ափնյացնել յուրա-
քանչյուր մորթու քաշի ամեն մի կիլոգրամի
համար գործածվող աղի քանակը՝ հասցնելով մինչեւ
500 գրամի։ Մորթու հաստ տեղերում, ինչպես
նաև գլխամասում, թաթերում և կողերում աղը
պետք ե ձեռքով լավ տրորել։ Աղելուց հետո
մորթին փաթթվում ե այնպես, ինչպես կատար-
վում ե տուղլուքով աղելու գեպըում։

Զմրանը մորթիները թե մեկ և թե մյուս
յեղանակով պետք ե աղել տաքացվող շենքում.
Վորպեսզի մորթիները չսառչեն և լավ ուտեն աղը

(ցուցա աեղում աղը լավ չի լուծվում, վորի-
պատճառով ել մորթին լավ չի աղվում)։

Մանր կաշվեհումքի չորացումը կատարվում
է գարնանը, ամռանը և աշնանը՝ վերևից ծածկ-
ված տեղերում, վորոնք պետք ե այնպես շին-
ված լինեն, վոր անասունները ներս չմտնեն
ու մորթիները չտրորեն, իսկ ձմռանն այդ չո-
րացումը կատարվում ե հատուկ չորանոցներում,
վորտեղ այդպիսիք կան։

Ամառային չորանոցները պետք ե բաց
լինեն ամեն կողմից, կամ գոնե յերկու հանգի-
պական կողմերից, վոր քամի խաղա և կաշիները
շուտ չորսանան։

Չորանալու համար մորթիները պետք ե փռել
փայտի չոր և հարթ ձողերի վրա և վոչ թե պա-
րանի, մավթուլի կամ ճաղերի վրա։

Մորթին փռվում ե փայտի ձողերի վրա
մեզզրայով գեղի վեր՝ մեջքի յերկարությամբ,
թաթերն ու կողերը գեղի ցած։

Մորթիները չպետք ե ձգել։ Կողերին, թա-
թերն ու գլխամասին պետք ե ամբացնել փոք-
րիկ ձողիկներ, վորպեսզի մորթու այդ մասերը
կուչ չգան։

Մորթիները պետք ե լավ չորացնել։ Մոր-
թու լավ չորացած լինելը վորոշվում ե գլխա-
մասի և հետույքամասը շոշափելով։

Յեթե այդ մասերը չոր են, նշանակում ե
չորացել ե և ամբողջ մորթին:

Վոչխարի և այծի մորթիները մեզդրայի կող-
մից չորացնելուց հետո պետք ե շուռ տալ և
չորացնել բրդի կողմից, փռելով մորթին բրդու
կողմով դեպի վեր՝ մաքուր հատակի կամ տախ-
տակամածի վրա:

Փոելիս մորթիները պետք ե բաց անել,
ուղղել զգուշությամբ, վորպեսզի մեջքի ուղղու-
թյամբ, ծալված տեղում, մորթին չկարտվի:

11. Կոնսերված մորթիներն առանց հետա-
ձգելու պետք ե հանձնվեն մոտակա մթերման
կետն:

3. ՄԹԵՐՔՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ
ՅԵՎ ՄԹԵՐՄԱՆ ԿԵՏ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

12. Փաթեթ արած մորթիները դարսվում
են մաքուր և փակ շենքում, հատակի կամ տախ-
տակամածի վրա՝ 4—5 հատ իրար վրա: Զմեռը
մորթիները պետք ե պահել այնպիսի շենքում,
վոր շատոչեն:

13. Զոր հումքը պետք ե պահվի մաքուր
(վոչ փոշոտ) և չոր շենքում, տախտակամածի
վրա, վորպեսզի նորագունա:

Զի կարելի պահել չորացրած մորթիները
սառեցրած ու թաց՝ աղ արած մորթիների հետ
մի շտեքելում: Զանազան ձեռվ կոնսերված մոր-
թիները պետք ե պահել առանձին-առանձին:

14. Վորպեսզի չորացրած հումքը չխոնա-
գանա, տեղափոխելիս կաշին պետք ե սայլի վրա՝
թաց, աղ արածից և սառեցրած հումքից առան-
ձին դարսել: Պահելիու տեղափոխելիս չորացրած
և սառեցրած հումքի հետ պետք ե շատ զգուշ
վարվել: Հի կարելի մորթիների վրայով քայլել
մորթիների վրա նստել, մորթիները ծռել կամ
տրորել, վորովհետև այդ բոլորից նրանք կոտըրտ-
վում են:

15. Տեղափոխելիս, ինչ յեղանակ ել լինի,
պետք ե աղած և չոր մորթիները ծածկել բրե-
զենտով, կլիննկով կամ, ծայրահեղ դեպում
ուղղոժով:

4. ԱՆԱԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՑԱՐԱԿԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ

16. Արգելվում ե քերթել սիբիրախտից,
խլախտից, կատաղությունից, վատորակ աայոկից
խոշոր յեղջուրափոր անասունների ժանտախտից,
սիպտոմատիկ կարբունկուլից, վոչխարների բը-
րագոտից և աֆրիկական խլախտից սատկած
անասունների մորթիները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հիշյալ հիվանդությունների գեղըռում անասունների մարմինները մորթու հետ միասին պետք ե վոչընչացնել այրելով, կամ ոգտագործել ավտոկլավերում յեփելով 4 մինչլորտի տակ առնվազն 4 ժամվա ընթացքում կամ, ծայրահեղ դեպքում, պետք ե թաղել հատուկ անասնագերեղմանոյներում առնվազն յերկու մետր խորությամբ, դիակը նախքան թաղելը պետք ե այրել, կամ նրա վրա շաղ տալ հանդած կիր:

17. Պիրովլազմոզի և տրիպանոզեմոզի տեսակետից անբարեհյուս վայրերի սատկած անասուններից քերթած մորթիներն աղվում կամ լավ չորացվում են այնպիսի տեղերում, ուր կենդանիները չկարողանան մուտք գործել, իսկ տրիպանոզեմոզի գեղըռում՝ փակ շենքերում։

18. Թոքախտով (առւբերկուլյոզով), անտիկոմեկովով և բատրիոնոկոզմոզով հիվանդ անասունների դիակներից մորթիները քերթվում են ազատ կերպով։

19. Այլ վարակիչ հիվանդություններով հիվանդ անասունների մորթիները յենթարկվում են համապատասխան վետամանմշակման, ըստ անասնաբուժի ցուցմունքների։

20. Զեռքի վրա վերքեր, ձանկովածքներ և կաշվի այլ մնացվածքներ ունեցող անձնավորություններին չի թույլատրվում վարակիչ հիվանդություններից սատկած անասունների մարմնից մորթին քերթել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Բրուցելյուզով մնացված անասունների դիակից մորթին քերթել կարելի յե միայն ուետինե ձեռնոց հագած։

21. Արգելվում ե մորթիների հետ միասին միևնույն սայլով տեղափոխել սննդամթերքներ, անասունի կեր և անային զանազան պիտույքներ։

Այն սայլերը, բրեզենտները, կլիոնկաները և ուագոֆը, վորոնք ոգտագործվել են մորթիներ տեղափոխելու ժամանակ, պետք ե մորթիները տեղափոխելուց հետո յենթարկել համապատասխան ախտահանման՝ անասնաբուժի ցուցմունքով, տըրանսպորտի տիրոջ հաշվին (ԽՍՀՄ ԱՌԺԿ. կաշվեհումքի պահեստները և հումք վերամշակող և պահող այլ ձեռնարկություններն անվտանգ դարձնելու վերաբերյալ՝ վորոշումը)։

22. Այն բանվորները, վորոնք քերթում են սատկած անասունների մորթիները և հումքը մաքրում են ճարպից, պետք ե ունենան արտհագուստ, համաձայն աշխատանքի պաշտպանության պահանջների։

23. Սույն հրահամսգում նշած կետերը չկա-
տարողները կենթարկվեն պատասխանատվու-
թյան՝ ըստ որենքի:

ԺԿԽ-ի Կոմղազին կից հումքի վորակի
Պետական թյուն՝ Սուկազին
ԽՍՀՄ-ի Խորհանածեսությունների Ժողկոմատի
հայթայթման հսկողության
սեկտորի վարիչ՝ Գյոլիլաս
ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի Անառնաբուժական
արշության պնտ՝ Վենդերով
Սայուզղագոտկոթի
Վառաժարչի տեղակալ՝ Բուշմակին



3428

ԳԵՐԵ 15 ԿՈՄ.



ИНСТРУКЦИЯ

По сечемке, консервировке, хранению и
сдаче кожсырья для совхозов, животновод-
ческих товарных ферм и колхозов